

1996 C 1930/821
ԱՊՐԲԵՋԱՆԻ ՆԱԿԹԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՄԻԱՑՈՒԹՅՈՒՆ («Ազնեվթ») _____

ИНСТИТУТ
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

ԱԶՆԵՎԹԻ

== ՆՈՐ ՀՆԳԱՄՅԱԿԸ ==

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՇԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

ԱԶՆԵՎԹԻ ՎԱՐՁՈՒԹՅԱՆ ՆՍԱՍԳՍՉ
Մ. Վ. ԲԱՐԻՆՈՎԻ ԶԵԿՈՒՅՈՒՄԸ
ԱԳՐԿՈՍԿՈՒՄԻ (Բ) ԲԱԳՎԻ ԿՈՄԻՏԵԻ
ՊԼԵՆՈՒՄՈՒՄ

338.98(47.924)

P-34

ՐԱՑԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ԱԶՆԵՎԹԻ
Բազմա — 1930 թ.

C. 1930/821

Սա 1441

338.98(47.924)

բ-34

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТ
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

ԱԶՆԵՎԹԻ

Ն Ո Ր Հ Ն Գ Ա Մ Յ Ա Կ Ը

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

ԱԶՆԵՎԹԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ
Մ. Վ. ԲԱՐԻՆՈՎԻ ԶԵԿՈՒՑՈՒՄԸ
ԱԴՐԿՈՄԿՈՒՄԻ (Բ) ԲԱԳՎԻ ԿՈՄԻՏԵԻ
ՊԼԵՆՈՒՄՈՒՄ

01.03.2013

32303



Напечатано в гостипограф.
„Красный Восток“.
БАКПОЛИГРАФА. БСНХ
Баку, Карант. ул., д. № 84.
Главлит № 7360.
Заказ № 2991. Тираж 500.



56836-66

ՀԱՌԱԶԱԲԱՆ

XV Կուսկոնֆերանսի և Համամիութենական Սորհուրդների V Համագումարի 5-ամյա ժողովրդական տնտեսության վերաբերյալ լայնացրած ծրագիրը հաստատելուց հետո անցել և միայն 7 ամիս: Մինչդեռ տնտեսության մի շարք ճյուղերում սոցիալիստական իրականությունը դերազանցել և ծրագրված «ուպտիմալ» թափերից: Ներկայումս 5-ամյա ծրագիրը զգալի լայնացրվում և տնտեսության մի շարք ճյուղերում, վորոնց թվումն և նաև նավթարդյունաբերությունը: Այդպիսով, 5-ամյա «ուպտիմալ» ծրագիրը, վորը համարվում էր հասցրած իր հնարավորությունների սահմանին, աստիճանաբար վերակազմվում և 4-ամյակի: Սոցիալիստական շինարարության հնարավորությունների ճիշտ հաշվի չառնելը, վերաբերվում և նաև նավթարդյունաբերության: Վերջնական (ներկա մոմենտում) նավթի արտահանության ծրագիրը 5-ամյա վարիանտով 100% ավել և սկզբնական վարիանտից. այդ վերջինով նախատեսված էր հինգամյակի վերջին տարում—(1932—33 թվ.) արտահանելիք 19 միլ. տ. նավթ:

Պետպլանը տնտեսության լայնացման 5-ամյա ծրագրում նշանակել էր 21,7 միլ. տ. նավթ արտահանել, այնուհետև այդ թիվը շնորհիվ Միության Բարձրագույն Ժող. Տնտես. Սորհրդի բարձրացրված և մինչև 23,5 միլ. տ.: Ներկայումս արված և մի խոշոր թոխը—1932-33 թ. համար կտրուկ ակնհայտ էր և նշանակված, վորը հավասար է 35—40 միլ. տ.

Յերկրի տնտեսության մեջ, խոշոր արդյունաբերությունը ուժեղացնող դերը ընկնում և սոցիալիստական ինդուստրիալիզացիային, վորի վրա հենվում և 5-ամյա ծրագիրը: Այդ պատճառով արդյունաբերության աճումը պետք է գյուղատնտեսության աճումից անցնի: Միայն այդ միջոցով մենք կապահովենք մեր սոցիալիստական տնտեսության անկախությունը կապիտալիզմի շրջապատումից: Համաձայն դրան, 5-ամյա ծրագրով հատկացրած գումարը—ամբողջ յերկրի կարիքների համար—64,6 միլիարդ տ., չորրորդ մասը—16,4 միլ. տ. արդյունաբերության (կամ քառորդ) մասն է:

5 տարվա ընթացքում, մինչդեռ արտադրական միջոցները աճում են 230%, սպառման միջոցների արտադրությունը աճում և միայն 145%:

Ուրիշ խոսքով, խոշոր արդյունաբերութեան զարգացման տեւողքը անցնում է արդյունաբերութեան մյուս ճյուղերից: Մետաղը, վառելիքը (բենզին, կերոսին և այլն), շինարարական նյութերն են, վոր յերկրի ինդուստրիալիզացիայի հիմքն են կազմում և մեղմացնում են մեր կախումը ներմուծումից:

Անհրաժեշտ է վոր ԽՍՀՄ այս 5 տարվա ընթացքում մեքենաներ և գործիքներ ներս մուծող յերկրից դառնա նույն պիտույքներ արտադրող յերկիր:

Մինչև այժմ մենք մեր մետաղե արդյունաբերութեան գործը չենք հասցրել նախապատերազմյան չափերին: 5 տարվա ընթացքում յերկաթի արտահանութիւնը, չուգունի և պողպատի ձուլումն, մեքենաների շինարարութիւնն աճում են 3 անգամ: Բայց չնայած աճման խոշոր թափին, դրանք չեն բավարարում յերկրի պահանջներին: Մետաղի վերաբերյալ պատվերները ինդուստրիալիզացիայի շղթայի ամենագլխավոր ողակներից մեկն է, վորից կախված է արդյունաբերութեան, գյուղատնտեսութեան և տրանսպորտի վիճակը: Պարզ է, վոր յերկիրը տրակտորներով, սվտոմոբիլներով, գյուղատնտեսական գործիքներով, մեքենաներով մատակարարելու հարցը իր հերթին կախված է մետաղե արդյունաբերութեան աճման աստիճաններից:

Բացի մետաղից խոշոր դեր է հատկացրվում նաև եներգիայի ռեսուրսներին և վառելիքին: Արդյունաբերութեան համար վառելիքի սպառումը պետք է հասնի 53,8 միլ. տ.-ից մինչև 95,4 միլ. տ.: Միաժամանակ, նավթի և փայտի նշանակութիւնը ընկնում է, իսկ ածուխի և տորֆի նշանակութիւնը ուժեղանում: Յենթադրվում է Դոնբասի վառելիքով բավարարել յերկրի արդյունաբերութեան ընդհանուր պահանջի կեսը, հետևաբար Դոնբասը պետք է բարձրացնէ իր արտադրութիւնը 27 միլ. տ. մինչև 52,5 միլ. տ: 5 տարվա ընթացքում տորֆի արտադրութիւնը ավելանալու է 3 և կես անգամ: Ինչպես վերևը հիշված էր, նավթի նշանակութիւնը իբրև վառելիք 5 տարվա ընթացքում պետք է ընկնի: Գլխավոր բարդ պատվերներից մեկըն է բավարարել շուկայի պահանջը—բենզինի, կերոսինի և բաց գունի չուղերի և հետևաբար մոտ ապագայում նավթարդյունաբերութիւնը բնորոշվելու է իբրև «բենզին—կերոսին» արտադրող, այլ վոչ «մազութ—կերոսին», ինչպիսին էր նա մինչև այժմ: Այդ բոլոր պատճառների հետևանքով, բերքը պետք է բարձրանա և դա թույլ կտա զարգացնել և վերականգնել հացի եկսպորտը:

Նշանակած ժամանակամիջոցում ելեկտրական եներգիայի արտադրանքը բարձրանալու է չորս անգամ: Ելեկտրական շինարարութեան համար ի նկատի է առնվում 4 միլլիարդ ո.:

Այդ շատ կարևոր է գյուղատնտեսական կոլլեկտիվիզացիայի տեսակետից:—Ծրագրի վերջին տարում կոլլեկտիվ տնտեսութիւնները պետք է միացնեն 17—20 միլ. գյուղացիութիւն: Այդ թիվը ցույց է տալիս կոլլեկտիվ տնտեսութեան զարգացման թափը, վոր հնարավորութիւն կտա գյուղացիութեանը ձեռք վերցնել իր հին դարավոր հողի մշակման ձևերից և անցնել ավելի կատարելագործված սխեմաների և միաժամանակ կփոխվի գյուղում գոյութիւն ունեցող դասակարգային հարաբերութիւնը:

Հիշած բոլոր պատճառների հետևանքով բերքը պիտի բարձրանա և դա թույլ կտա զարգացնել և վերականգնել հացի եկսպորտը:

Զարգացնելով ժողովրդական տնտեսութիւնը, մեծ պահանջներ է դրվում նաև տրանսպորտի առաջ: Տրանսպորտին հատկացրած է 6,3 միլլիարդ ուրբլի, վորից 5 միլլարդը ընկնում է յերկաթուղի վրա: Այդ վերջին գումարի $\frac{2}{3}$ պետք է ծախսվի գործող յերկաթուղու գծերի վերաշինման վրա, իսկ $\frac{1}{3}$ —22 կիլոմետր տարածութեամբ նոր գծեր անցկացնելու վրա: 5-ամյակի կեսից պետք է սկսվի Վոլգո-Դոն ջրանցքի փորելը: Ճանապարհների հաղորդակցութեան—խճուղիների համար հատկացրած է մեկ միլլիարդ ուրբլի. այդ կարևոր է, քանի վոր յենթադրվում է յերկիրը ավտոմոբիլիզացիայի յենթարկել:

Մոտավորապես այսպես են սոցիալիստական ծրագրի խոշոր աշխատանքների չափերը. այդ աշխատանքները պետք է փոփոխեն հետամնաց յերկիրը կատարելագործված տեխնիկայով և կոլլեկտիվ գյուղատնտեսութիւնով:

Ինչպիսի դեր է հատկացրած նավթարդյունաբերութեան այդ հսկա շինարարութեան մեջ: Ինչու՞ն է կայանում նրա հետանդկարները 5-ամյա ծրագրով:

Նավթարդյունաբերութիւնը կրկնակի կապված է ինդուստրիալիզացիայի ծրագրի հետ: Մի կողմից—նա գտնվում է ծանր ինդուստրիալիզացիայի առաջին շարքում, վորոնք ստեղծում են իրենց արտադրած մթերքներով այն անհրաժեշտ հիմքը, վորի վրա պետք է դեպի սոցիալիզմ տանող ճանապարհը ընթանա: Մյուս կողմից նավթարդյունաբերութիւնը աջակցելով յերկրի տնտեսութեան վերափոխման, ինքն էլ պետք է հիմնովին յենթարկվի փոփոխման և տեխնիկապես զարգանա: Մեքենայական ուժ գոր-

ծաղրելում մեր յերկիրը բռնում և մյուսների շարքում վերջին տեղերից մեկը: Վոչ թե անցյալի համար և բնորոշ ձևերի աշխատանքը, այլ և մինչև այժմ, ներկայումս էլ այդ բանը տեղի և ունենում: Մենք դեր նոր ենք սկսում հպատակեցնել մեքենայական ուժը և հենվելով այդ ուժի վրա, մենք կազատվենք աշխատանքի նախնական ձևերից: Մեզ մոտ ելեկտրոֆիկացիան հիմնված և ջրի ուժի և ցածր տեսակի վառելիքի վրա (տորֆ, չերկրորդ տեսակի ածուխ) և ընդհանուր առմամբ կապված չեն նավթի հետ. միայն մի քանի ելեկտրական կենտրոններ են բանեցնում իբրև վառելիք նավթը և մի քանի տեսակի չուղեր:

Ուրիշ խնդիր և մոտորիզացիան: Նավթարդյունաբերությունը միակ յեվ անփոխարինելի մասակարարողն և վառելիքով, վառելիք անհրաժեշտ են այսպես կոչված ներքին վառվող մեքենաներին (двигатели внутреннего сгорания): Այդ մեքենաները պետք է ահագին դեր խաղան մեր տնտեսությունը մեքենայացնելում: Նավթարդյունաբերությունը պետք է տա տրակտորների, մեքենաների համար կերոսին, սավառնակների և ավտոմոբիլների համար բենզին, մոտորների և զինվորների համար հատուկ չուղեր: Այդ մեքենաները տարածելու թափը չափազանց մեծ է:

1932—33 թվին մենք կունենանք 500.000 տրակտոր 1928—29 թվի սկզբին 27.500 էր: (Այս զեկուցումը տպելու ժամանակ հայտնի յեղավ, վոր Պետպլանի և Տրակտորկենտրոնի վերջին հաշիվներով 1932—33 թ. գործող տրակտորների քանակը հասցնվելու և մինչև 818 հազար և հետևաբար կերոսինի ընդհանուր սպառումը (ներքին և արտաքին շուկաների համար) բարձրանալու և մինչև 10.385 հ. տ.: Այդ կերոսինը արտադրելը ապահովեցնելու համար, անհրաժեշտ և նավթի արտադրությունը ամբողջ Միություն մեջ հասցնել վոչ պակաս, քան 40 միլ. տ.): 1932—33 թվին մենք կունենանք 500.000 ավտոմեքենա (1928—29 թվին—16.500):

Այդ մեքենաները կտան փոխանակ 840.000 ձիու ուժի 1928—29 թ.—1,620,000 ձիու ուժ 1932—33 թ.: Նավթարդյունաբերության պարտականությունն և վառելիքով ապահովել այդ մեքենաները, վորոնց քանակի մասին հիշված էր վերևում, յեթե միայն այդ գործով սահմանափակվեր նավթարդյունաբերության աշխատանքները, այդ դեպքում էլ նրանք խոշոր կլինեն: Մինչդեռ նավթարդյունաբերության առաջ գրված են նաև կտրուկ եկսպորտի հարցերը:

ժողովրդական տնտեսությունը վերակառուցման չենթարկելը միայն այն պայմանում և հնարավոր, յեթե արտասահմանում

նում ձևեր կրելով անհրաժեշտ տեխնիկական կահավորումներ, վորոնք կարելի է ձևեր բերել վճարերով վառուտայով մեծ գումարներ:

Մեր եկսպորտային ապրանքների շարքում նավթային մթերքները բռնում են աչքի ընկնող տեղը: Անցյալ 1929—29 թ. նավթային եկսպորտը իր արժողությունը կազմում էր 15% յերկրի ընդհանուր եքսպորտից և 26% արդյունաբերական եկսպորտից, զիջելով միայն փայտի եկսպորտին, վորը բռնում էր առաջին տեղը:

Այսպես բազմակողմանի և կարևոր են այն պահանջները, վոր յերկիրը գնում և նավթարդյունաբերությունն առաջ:

Սկսած 1927—28 թվականից նավթային արդյունաբերությունը՝ պուզընթաց յերկրի ընդհանուր տնտեսության զարգացման, մտավ այն շրջանը, յերբ սպառման հնարավորությունները ավել էին, քան արտադրական հնարավորությունները: Իրանից առաջ հիմնական տեղեկանքի հակառակն էր:

Տնտեսության վերականգնեցման ընթացքում նավթային արդյունաբերությունը միշտ առաջինն և չեղել աշխատանքի ուժեղացրած թափով, քան խորհրդային տնտեսության բոլոր ձևերը:

Այդ պատճառով էլ նավթային արդյունաբերության արտադրական հնարավորությունն ավելի բարձր և ներկայումս, քան ներքին շուկայի պարունակությունը:

Բաց վերջերս այդ զրույթունը խիստ փոխվել է:

Միություն ժողովրդական տնտեսության ինդուստրիալիզացիայի թափերը վորոշելուց հետո, նավթային արդյունաբերությունը հաղիվ և համնում արդյունաբերական մյուս ձյուղերի թ. փերի աճման: Իրա հետ միասին աճում և ներքին շուկայի պարունակությունը և կտրուկ կերպով արգելք է դնում օձումը կրճատելու: Այդպիսով նավթային արդյունաբերության առաջ գրված պատկերները կրկնապատիկ պատասխանատու են դառնում:

Այդ պատվերների պատասխանատվությունը, նրանց բարդությունը, նրանց հետ կապված դժվարությունները ստիպում են լուրջ ուշադրություն դարձնել ռացիոնալ ոգտագործելու ունեցած ռեսուրսները, ստորյերկրյա շերտերում գտնվող նավթի պաշարը, տեխնիկական մատակարարումը, ֆինանսական միջոցները և այլն և նպատակահարմար կերպով իրագործել խոշոր շինարարության գործը: Վերոհիշյալ բարդ պատվերները իրագործելու համար անհրաժեշտ է մեզ ընդհանուր ղեկավարություն

Միութեան բոլոր կազմակերպութիւններն ստեղծված, վորը կօղղե բազմաթիւ նավթային արտադրութեան աշխատանքներն այն ուղղութեամբ, ինչպիսին կհամարվի ամենանպատակահարմար յերկրի ընդհանուր շահերի տեսակետից և միաժամանակ կստեղծե պարզ ու ձկուն սպաւարտ:

Այդպիսի ղեկավարող կենտրոն ստեղծված է արդեն «Նավթային Արդյունաբերութեան Միացութեան Վարչութիւն», վորի ստրուկտուրան դեռ գտնվում է ձևակերպելու շրջանում. այդ վարչութիւնը պետք է իր հովանավորութեան տակ վերցնի բոլոր նավթային կազմակերպութիւնները (նավթային տրեստները, նեֆտեսինդիկատը, Գրոզնեֆտը, Գինի-ն և այլն):

ՆԱՎԹԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ ՅԵՎ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

Նավթարդյունաբերութեան 5-ամյա ծրագրի հիմքը կազմում է հետևյալը. — բաւարարել ներքին շուկայի և եկսպորտի պահանջները «վորակյալ» անփոխարինելի նավթային մթերքներով (բենզին, կերոսին, յուղեր, գազոյ): Ներկայումս եյապես նավթարդյունաբերութիւնը չունի հաստատ 5-ամյա ծրագիր: 3 ամիս առաջ կազմած վարիանտով նախատեսվում էր 5-ամյակի վերջին տարին արտահանել 26 միլ. տ. նավթ, բայց այդ վերաշրջվեց շուկայի ուժեղ աճող պահանջներով: Կազմվում է նոր վարիանտ և առայժմ մենք ունենք սկզբնական թվեր. այդ թրվերը մեզ պարզ ցույց են տալիս այն հսկայական պահանջների չափը, վորոնք ներկայացվում են նավթային արդյունաբերութեանը:

1. 5-ԱՄՅԱԿԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԾԵՐԸ

Ծրագրի սկզբնական թվերը նախատեսնում են խոշոր փոփոխութիւններ, առաջնակարգ նշանակութիւն է ստանում ներքին շուկան, եկսպորտի նշանակութիւնը համեմատաբար թուլանում է, մթերքներից գլխավոր տեղը բռնում է վոչ թե բենզինը, այլ կերոսինը (բենզինը բռնում է խոշոր տեղերից մեկը): Կերոսինի գլխավոր տեղ բռնելը բացատրվում է գլուղատնտեսութեան մեջ տրակտորներ մտցնելու կարիքը: Ավտոմեքենաների, տրակտորների և մոտորների շինարարութեան ծրագրի համաձայն և անհրաժեշտ եկսպորտի կոնտինգենտի թվերը գումարելով իրար հետ, կստանանք 1932—33 թ. շուկայի պարունակութիւնը (ёмкость), վորի համար բնորոշ են հետևյալ թրվերը.

Բենզին — 6.300 հազար տոնն

Կերոսին — 8.200 » »

Յուղեր — 1.750 » »

Գազոյլ և մոտորի վառելիք — 3.000 տ.

Թե վոր աստիճանի ավելացրած են այդ թվերը, յերևում է հետևյալից. — ծրագրի վերջին վարիանտով յենթադրվում էր ունենալ.

Բենզոլին—4,5 միլ. տ.

Կերոսին—4,7 միլ. տ.

Յուղեր—1,1 միլ. տ.

Վերև բերած աղյուսակից պարզ է, վոր առաջին տեղն է տված կերոսինին. 8.200 հազար տ. կերոսին ստանալու համար 1932—33 թվին հարկավոր է արտահանել 50 միլ. տ., վորից 48 միլ. տ. պետք է դուրս համար, աչքի առաջ ունենալով նավթից 17% կերոսին դուրս գալը. 1928—29 թվին արտահանած է 13,5 միլ. տ. նավթ, իսկ 1929—30 թվին նախատեսված է 16,1 միլ. տ. արտահանել: Այդ պատվերը միանգամայն անկարելի է կատարել, վորովհետև մենք բավականաչափ նավթաբեր վայրեր, չունենք: Նոր ծրագիրը կազմելու ժամանակ, վորոշված էր լայն կերպով ոգտագործել կրեկինդ պրոցեսսը, վորը հնարավորություն կտա ստանալ ավելի բենզոլին և կերոսին: Այդ ձևով կերոսին ստանալը շատ քիչ է ուսումնասիրված և շատ էլ հասարակ բան չէ: Այդ հարցի մասին մենք կխոսենք, չերը կմտտենանք նավթագտման գործին: Մագուիթը կրեկինդի յենթարկելով ստացվում է մեծ քանակությամբ բենզոլին և կերոսին, և դրանով հընարավորություն է առաջ գալիս նավթի արտահանությունը պակասեցնելու: Բայց այդ իլեկցումը կարելի է հասցնել միայն մինչև 35—40 միլ. տ. 1932—33 թվում, ի նկատի ունենալով կրեկինդի շագագործումը ամենապակասը 35 միլ. տ. նավթ գտելու անհրաժեշտությունը:

Այդքան կարճ ժամանակամիջոցում 3 անգամ ավելացնել նավթի արտահանությունը առանձնապես ծանր և բարդ պատվեր է:

II. ՀԵՏԱԽՈՒՋՈՒՄՆԵՐ

Նավթի այդպիսի խոշոր արտադրանք ապահովելու համար, հարկավոր է ունենալ բավականաչափ հողի ֆոնդ և այդ հարցը 5-ամյա ծրագրի մեջ հիմնական հարցերից մեկն է: Ստեղծված գրուեթյունը, նոր նավթաբեր վայրերն չունենալը, անցյալ տարվա հետախուզական անբավարար աշխատանքների հետևանքն է: Մեր հետախուզական աշխատանքները միանգամայն անբավարար են և չեն համապատասխանում այն պատվերներին, վորոնք տրված են նավթի արտահանություն մասում:

Վորովհետև հետախուզումներից կախված է նավթային գործի ապագան, հարկավոր է վոր ֆինանսական որգանները խստիվ կերպով կատարեն նշանակած ծրագիրը, և կարևոր չափով դրամական միջոցներ հայթայթեն հետախուզումներն ամերիկական թափով առաջ տանելու, քանի վոր մեր յերկիրը ստորյերկրյա շերտում անկասկած պարունակում է նավթի խոշոր պաշարներ: Կատարելապես հետախուզման գործը դասավորելուց կարելի է հուսալ, վոր անպայման կգանվեն նավթի նոր շերտեր:

Ամերիկացիների վորձառությունը մեզ վստահեցնում է, վոր միայն հետախուզումների գործը կանոնավոր վարելու դեպքում կարելի է բավարարել ներքին շուկայի պահանջները և չըթուլացնել էքսպորտը: Վերջին 15 տարվա ընթացքում ամերիկացիք բացել են մի արք հարուստ նավթի շերտեր շնորհիվ լավ հետախուզման:

Ամերիկացիք կարողացան իրագործել հետախուզման պրոբլեման, շնորհիվ գործի գիտնական դասավորման, ֆինանսական բավարար դրության և ամերիկական տեխնիկական գերազանց գործիքների: Նրանք հետախուզման ժամանակ չեն կորցնում վոչ մի ուր, վոչ մի ժամ, յերկրաբաններին հետևում են փորձներն իրենց կարևոր սարքավորումներով և անմիջապես սկսում են փորելու գործը: Յեթե կարիք է առաջանում ավելի խոր փորելու հարցը, անմիջապես հասցնվում են անհրաժեշտ մեքենաներ-գործիքները, նույն իսկ 2.000—2.500 մետր խորության հորեր փորելու համար:

Նոր բացած հանքում սկսվում են կայծակի արագությամբ շահագործական աշխատանքները: Հազիվ հորափորական աշխատանքները նկատելի են դառնում, հայթայթող ընկերությունները հասցնում են վագոններով անհրաժեշտ պիտույքները: Միացյալ Նահանգներում չկա վոչ մի ընկերություն, վոչ մի կապալառու, վոչ մի ֆիրմա, վոր չունենա սավառնակներ, գործիքներ, մթերքներ և բանվորներ տեղափոխելու համար: Այն դեպքում, յերբ հետախուզումը հեռու է յերկաթուղու գծից, գործիքները բերվում են հսկա ավտոմոբիլների վրա, կամ ճանապարհ չյեղած դեպքում— „гусеница“ -ի վրա, իսկ թեթև մասերը—սավառնակով: Յեթե հետախուզման հետևանքները բավարար չեղան—սկսվում է յերկաթուղու գծի շինարարությունը:

Այդ բոլորը մենք պետք է սովորենք և աշխատենք հետևելու ամերիկացիների որինակին: Հարկավոր է միայն չմոռանալ վոր հորափորումը կապված է միտք մեծ ուխկի հետ, իսկ վախենալ

ոխակից պեճֆ չէ, յէրե մեճֆ միայն փորեճֆ հավատացած լիճեղով հազարուքյան 100%, մեր հեճախու զումները հեռու չեն գնա:

Միացյալ Նահանգներում տարվա ընթացքում փորված հորերից 30%-ը անհաջող հետեանքներ են տալիս—նավթ չի գտնուվում և այդ հանգամանքը ամերիկացոց չէ վախեցնում և կանգնեցնում, վորովհետև նրանք հավատացած են, վոր մեկ հաջող հորը կարող է կրկնապատիկ կերպով ծածկել տասնյակ անհաջող հորերի պատճառած վնասները:

Չպետք է կարծել, վոր ամերիկացիք փորում են կուրորեն, պատահական կերպով. ընդհակառակը, նրանք ոգտվում են հետախուզման նոր ձևերով, չերկրաբանների մեծ կազմով և ալյն: Նրանց աշխատանքներն իզուր չեն կորչում: Միացյալ-Նահանգներում ստացված նավթը 9 անգամ ավել է ԽՍՀՄ ստացված նավթից (120 միլ. տ.). այդ ստացված նավթի 45% արտադրվում է այն 93 ծննդավայրերից, վորոնք վերջին 5 տարին հայտնի չէին իբրև նավթային ծննդավայրեր:

Պարզ է, յեթե մենք ել ամերիկացոց պես սկսենք հարյուրավոր հորեր փորել տարվա ընթացքում, շատ հավանական է, վոր նրանցից մի քանիսը կբանան նավթի մի վորեկ խոշոր ծրնընդավայր և անմիջապես կստեղծվի նավթաշահագործման հողի ֆոնդ: Մեր հեճախու զումները պեճֆ է լայնանան ներկայումս շահագործվող շրջանների սահմաններից դուրս և 1932—33 թվին պետք է տան նավթի այդ տարվա գումարի 30—35%: Այս թվերը պահանջում են ամերիկական թափը պահպանելու համար վորակյալ աշխատավորներ և բավական տեխնիկական և ֆինանսական մատակարարում:

Դրա հետ միասին հարկավոր է հետախուզումը շարունակել հին շրջաններում, գտնել ավելի խոր տեղերում նոր շերտեր: Առհասարակ հին շրջաններում, վորտեղ աշխատանքի ընդհանուր պայմանները ավելի բարեհաջող են, հետախուզումները անհամեմատ հեշտ են անցնում, քան հեռավոր շրջաններում:

Մեր ամենախոր հորը հազիվ 1,000 մետրից է անցնում, Ամերիկայում շատ հորեր 500—1000 մետրից նավթ չեն տալիս, մինչդեռ միևնույն ծննդավայրում 2,000 մետրից տալիս են մեծ քանակությամբ նավթ:

Կալիֆորնիայում (Կիլման—Հիլ տեղում) 1906 թվին փորվել են հորեր 300—400 մետր խորության և վոչ մի հետեանք չի ունեցել. 1915—16 թվերում հորափորումը շարունակել են մինչև 1,000 մետր, շատ չնչին չափով նավթ է ստացվել. տասը տարի մնալուց հետո, այդտեղ հորափորումը վերսկսել են և հաս-

նելով մինչև 2,000 մետր, ստացել են բացառիկ հարստություն ունեցող նավթահորեր: Ներկայումս գիտնականները կարծիքով, այդ շրջանը Միացյալ Նահանգներում առաջինն է:

Այս որինակը մեզ համար չափազանց խրատիչ է—կարող է պատահել, վոր մեր Ղալայում միևնույն բանը կպատահի, գուցե մեր հին շրջաններում խոր շերտերը նույնքան հարուստ են, վորքան վերինները:

Մեր հին շրջանների նավթային շերտերի շրջանակները մինչև որս գեռես անվորոշ են, իսկ ամերիկացիները ամենաշատը տարի, տարի ու կես անցնելուց հետո գիտեն շրջանակի սահմանը: Մեզ մոտ հին շրջաններում հետախուզումները սկսվել են ավելի շուտ, քան նավթի նոր ծննդավայրեր գտնելը և այդ կատարված աշխատանքների հետեանքները բավականին զգալի են:

Վերջին տարիների ընթացքում մեծ դեր խաղաց Սուրախանու V շերտը և այդպիսի դեր պետք է կատարե նոր գտնված VI-ը: Դեպի խոր տարված հետախուզումները հին շրջաններում վորոշել են մեր ծննդավայրի ներքին բաժնի նավթի հարստությունները, բացվել է շատրվան խփող Կիրմակու և Ներքին Կիրմակու շերտերը, վորոնց մասին Բալախանի—Սարուչի և Ռամանու շրջանները չերաղել անգամ չէին կարող: Միևնույն չերտեթը կատարվեց նաև Գրոզնու շրջանում, վորտեղ XVI շերտը (Գրոզնու նոր շրջանում) արտահայտվեց նավթի խոշոր պաշարով:

Հետախուզման աշխատանքները նոր շրջաններում պետք է տարվեն լարված կերպով և նոր բացած շրջաններից ստացած նավթը կծածկե հին շրջանների սակավ նավթի արտահանութունը, վորը կառաջանա անպայման:

Ազնեվթը հույս է դնում հետեյալ շերտերի նավթառատության վրա, բայց վորքան կարգարանան այդ հույսերը՝ հնարավոր չէ վերջնականապես հաստատել—Պուտալի ներքին շերտը, Բիրի-Հեյրաթում XVI ավելի խոր գտնվող շերտերը, Սուրախանու Կիրմակուի վրայի շերտերը:

Նոր և խոր շերտերը բաժնալու հեռանկարը Գրոզնու շրջանում դժվարանում է, վորովհետև այդ հնարավոր է միայն մոտավորապես 2,5 հազար մետր խորություն փորելուց հետո: Գրոզնու նոր շրջանում հայտնի է արդեն բոլոր շերտերի դասավորումը, վորը հիշեցնում է Գրոզնու հին շրջանի շերտերի դասավորումը:

Այդպիսով, Բագվում ավելի շատ են հետախուզական հնարավորութիւնները, քան թե Գրողնում, և զրա համար ել Գրողնու վրա առանձնապէս հուսեր չեն դրվում: Նոր հետախուզումները չերկրորդական շրջաններում շատ կարևոր նշանակութիւն են ստանում. այդպիսին են—Եմբայի, Ուրալի, Սախալինի և մյուսները: Վորովհետև Ազնեվթի հետախուզական գործերը ավելի լայն են, քան Գրողնում, նա նոր բացած շրջանների պէտք է ստանա 2 միլ. տ. նավթ.:

1932—33 թվում յենթադրվում է արտահանել 35 միլ. տ. նավթ, վորը բաժանվում է հետևյալ կերպով (հազար տոնն):

| | Հին շրջաններից | | Ընդամենը |
|---------------|----------------|----------------------------|----------|
| | արտահ. նավթը | Նոր շրջաններից արտահ. նավթ | |
| Ազնեվթ | 15.200 | 2.000 | 17.200 |
| Գրողնեվթ | 9.300 | — | 9.300 |
| Եմբանեվթ | 350 | 1.500 | 1.850 |
| Ուրալնեվթ | — | 4.000 | 4.000 |
| Սախալինեվթ | 500 | 500 | 1.000 |
| Մնացյալ շրջան | 100 | 1.000 | 1.000 |
| | 25.000 | 9.000 | 34.500 |
| | (+ 550 գազ) | (գազի հետ—35.000) | |

Անցած 5 տարվա ընթացքում նավթի արտահանումը այսպէս է աճում (հազար տոնն).

| | 1924—25 | 25—26 | 26—27 | 27—28 | 28—29 | 5 տար. աճ. % |
|------------|---------|-------|--------|--------|--------|--------------|
| Ազնեվթ | 4.663 | 5.514 | 6.810 | 7.574 | 8.683 | 86 |
| Գրողնեվթ | 2.103 | 2.484 | 3.104 | 3.682 | 4.558 | 117 |
| Եմբանեվթ | 195 | 218 | 253 | 250 | 269 | 38 |
| Մնաց. շրջ. | 25 | 30 | 32 | 36 | 40 | 60 |
| Ընդամենը | 6.986 | 8.246 | 10.199 | 11.542 | 13.550 | 94 |
| | 100 | 118 | 146 | 165 | 194 | |

Նախընթաց հնգամյակում նավթը ստացվում էր նախորդ վորոշ ռայոնի շերտերից: Այս ընթացիկ 5 տարում հայտնի չեն վոր միայն շերտերը, այլ և նրանց աշխարհագրական կետերը և զրանով ծրագրի կատարումը դժվարանում է:

Վորովհետև մեր Միւրքյան նավթային արդյունաբերւթյան ապագան կախված է հետախուզումների բովից, աշխատանքի վորոհ համարակարգումը՝ հարկավոր է մեր հանգործների քա-

ցարել յեվ հավասացնել, վոր ուխկը անխուսափելի յեվ որինական է, յեվ դա չպէտք է արգելի դառնա իրագործելու 5-ամյակի ծրագրով նախատեսված նավթային հետախուզումների աշխատանքները:

Նավթը արտահանելու գործը կանոնավորվում մենք ունենք արդէն մեծ նվաճումներ: Լուրջ հարցերից մեկն է շահագործել ուժասպառ կամ կիսաուժասպառ շերտերը. այդ տեսակները կան նաև մեր շրջաններում: Հայտնի է, վոր ներկայումս նավթի գոյութիւն ունեցող արտահանութիւն միջոցներով հնարավոր է ստանալ միայն 25% շերտում գտնվող նավթի քանակութիւնից, իսկ մնացյալ 75%-ի մի վորոշ մասը կարելի է արտահանել ուրիշ կարուկ միջոցներով:

Միացյալ Նահանգներում ուժասպառ շերտերը արվեստական միջոցներով դարձնում են պէտքական, չնայած անընդհատ նոր շրջաններ գտնելուն: Այդ միջոցներից մեկն է—շերտի մեջ ող կամ գազ փչելը (կարելի է ջրի մղում): Ազնեվթի հանքերում այդ ուղղութիւնը փորձեր են կատարվում, Գրողնում ել մտադիր են այդ միջոցը փորձել:

5 տարվա ընթացքում գազի արտադրութիւնը զարգանում է հանքային շրջաններում. գազ պէտք է ստանալ այն չափով վորը վոր միայն մեր անտեսութիւնը գազֆիկացիայի յենթարկի, այլ բենզինի արտադրութիւնը բարձրացնի: Գրողնու գազը յենթադրվում է հատկացնել հատուկ բենզինի արտադրութիւն, վորովհետև նա պարունակում է իր մեջ մեծ չափով բենզին:

III. ՆԱՎԹԱԶՏՄԱՆ ԲԵԿՈՆՍՏՐՈՒԿՑԻԱՆ

Նավթագտման բեկոնստրուկցիայի յենթարկելը հետախուզումի նման նույնպէս գլխավոր պատվերներից մեկն է. փոփոխութիւնը պէտք է լինի հիմնովին և արագ: Մինչև վերջին ժամանակները գործարաններին հատկացրվում են չափազանց փոքր գումարներ և նրանք մատնվում էին անուշադրութիւն: Չնայած գործարանների լարված աշխատանքին, նրանց ուժը չէր հասնում նավթի արտահանութիւն հետևից: Այդ բացատրվում է գործարաններում չեղած հնացած սարքավորումներով և մաշված ապարատուրայով: Թեպետ և նոր գործարանները վերջին 2—3 տարվա ընթացքում են սարքավորվել, բայց զրանք չեն բավարարում գործարանների արտադրանքը հասցնելու նավթի արտադրանքին կամ ամերիկական թափին: Ամբողջ մեր Միութեան նավթարդյունաբերութիւն գործարանային ուժը այս չափով էր մեկ բավարարում:

Ձտեղու վերցրած նավթի հարարե-
րությունը գեպի ուղտավեա

| | նավթը | % % |
|------------|-------|-----|
| 1925—26 թ. | 74,0 | |
| 1926—27 թ. | 73,5 | |
| 1927—28 թ. | 80,5 | |
| 1928—29 թ. | 81,0 | |

Այդպիսով մեր ունեցած նավթի հիւնդերորդ մասը մնում է առանց գտելու. իսկ 1926—27 թ. Բագվա շրջանում հավաքած նավթի 38% չէր գտված: Այժմ դրությունը մի քիչ փոխվել է գեպի լավը այն պատճառով, վոր Ազնեվթի գործարաններում 1927—28 թ. տարվել են խոշոր աշխատանքներ: Այդ խոշոր ծը-
րագիրը իրագործելու համար անշուշտ հարկավոր է արագ դիմել կատարելագործված նոր ինստրուկցիաների հնքերի փոխարեն, ինչպիսին են խողովակաձև բատարեյաներ—ստանալու մի շարք նյութեր բենզինից սկսած մինչև կոկա, վակուում բատարեյաներ՝ մազուլթ և գուլրոն գտելու, կրեկինգ-գործարաններ բենզին և մա-
զուլթից կերոսին արտադրելու, վերջապես—նոր ասֆալտի, պարաֆինի և մրի գործարաններ կառուցանել:

Շուկայի պահանջը և նավթի արտահանության աճումը ան պայման են դարձնում գործարանների կահավորումի նորոգելը և և կատարելագործելը. բոլոր ստացված նավթը պետք է դովի և բոլոր գիտական միջոցները պետք է ձեռնարկել—բենզին, կե-
րոսին և յուղեր ստանալու համար:

5-ամյա ծրագիրը իրագործելու համար անհրաժեշտ է կրե-
կինգի տարածումը, վորի միջոցով հնարավոր է ստանալ մեծ չափով վոչ միայն բենզին, այլ նաև կերոսին, բայց մենք պատ-
րաստ չենք այդ գործին, վորովհետև այդ հարցը ծագել է առա-
ջին անգամ:

Պետք է կրճատել մազուլթի արտադրությունը, վորովհետև շատ ուժեղ է կերոսինի, բենզինի և յուղերի աճումը: Այս դեպ-
քում քարածուխային և ուրիշ արտադրական ճյուղերը պետք է տան վառելիքի այն մասը, վոր չափով վոր կրճատվում է մա-
զուլթի արտադրությունը: Մազուլթը հեշտ կարելի է փոխարինել ածուխով, տորֆով և այլն. իսկ յերկրի պահանջը բավարարել
բենզինով, կերոսինով և յուղերով կարող է միայն նավթարդյու-
նաբերությունը:

5 ամյակի վերջին ծրագրի առաջնական թվերով չենթա-
դրվում է գտել ամբողջ ամբողջ Միության գործարաններում
33 միլ. տ. 1932—33 թ.:

Ուղղակի նավթագտումը պետք է տա նավթամթերքների
հետևյալ քանակը.

| | Հազար տ. | ստանալու % % |
|-----------------|---------------|--------------|
| Բենզին | 3.300 | 10% |
| Կերոսին | 5.610 | 17% |
| Գազոլլ | 1.650 | 5% |
| Մազուլթ | 22.100 | 67% |
| Կորուստներ | 340 | 1% |
| Ընդամենը | 33.000 | 100% |



Կերոսինի և բենզինի թվերը չեն բավարարում շուկայի
պահանջը (6200 հ. տ. բենզին, 8.200 հ. տ. կերոսին) կրեկինգ—
պրոցեսսը պետք է լրացնե այդ թվերը:


Գրողնու նավթային Հետախուզման Ինստիտուտի հետազո-
տումներով պարզվել է, վոր նավթից ստացված բավարար մնա-
ցորդները, վորոնք կարելի է գործադրել իբրև վառելիք, Սուրա-
խանու մազուլթը կրեկինգի չենթարկելու դեպքում կարելի է
ստանալ 25% բենզին և 20% կերոսին. Գրողնու պարաֆինոտ
մազուլթը չենթարկելով կրեկինգի—կստացվի 20% բենզին և
18% կերոսին: Կրեկինգի կենթարկվեն նաև դեստիլատներ, վո-
րոնք ստացվել են բրայտ-ստոկի գտելուց հետո. դեստիլատների
ընդհանուր թիվը հասնում է 6.440 հ. տ., մազուլթինը (կրեկինգի
համար) 5.350 հ. տ., ընդամենը 11.790 հ. տ., վորից միջին թը-
վով պետք է ստացվի 26% բենզին (3.090 հ. տ.) և 22% կե-
րոսին:

Բոլոր գործարանների ուղղակի նավթագտման աշխատանք
ները կտան հետևյալ թվերը.

| | Ուղղակի գտում | Կրեկինգ | Ընդամեն | Կրեկինգից ստաց- ված մթերքների % % գեպի ընդ- հանուր գումարը. |
|---------|------------------|--|---------|--|
| Բենզին | 3.300 | 3.090 | 6.490 | 46% |
| | | (+ 100 հ. տ. բենզին գազից ստացված). | | |
| Կերոսին | 5.600 | 2.610 | 8.210 | 32% |

Այս թվերը կբավարարեն պահանջները, չենթ կրեկինգից
ստացված կերոսինի տոկոսը սխալ չե, այդ դեպքում անհրաժեշտ
կլինի նավթի արտահանությունը բարձրացնել մինչև 40 միլ. տ.
1932—33 թվին:

56836-66



Ամբողջ Միության սկզբնական թվերով նախատեսված նավթագտման աշխատանքները պետք է տան հետևյալ նյութերը:

| | | |
|--------------------------|-------------|-------|
| Բենզին | 6.490 Կ. տ. | 19,7% |
| Կերոսին | 8.220 " " | 24,9% |
| Ցուղեր | 1.760 " " | 5,3% |
| Փազուլ և մոտորի վառելիք | 2.700 " " | 8,2% |
| Մագուլթ (կաթսաների վառ.) | 9 290 " " | 28,2% |
| Մնացած մթերք. | 1.960 " " | 5,7% |
| Կորուստներ և վառելիք | 2.571 " " | 8,0% |
| Ընդամենը | 38.000 " " | 100% |

Այդ նշանակած թվերը կարող են փոխվել, բայց պարզ է, վոր համեմատած այժմյան նավթագտման գործի հետ, 1932—33 թվո մ կլինեն խոշոր փոփոխություններ:

Մագուլթի արտադրությունն իջնում է, չնայած վոր գտվող նավթերի մեջ ծանր նավթի քանակը շատանում է մինչև 42% 1929—30 թվո մ, 28,2%—1932—33 թվում, միևնույն ժամանակ, բարձրանում է բաց գույնի մթերքների տոկոսը—37,3%-ից մինչև 50%: այսպիսով սենք վոչ միայն կհասնենք կապիտալիստական ամերիկական նավթարդյունաբերության, այլև կանցնենք այդ սահմաններից, վորովհետև ամերիկացիք ստացել 1928 թվին միայն 45% բաց գույնի մթերքներ:

Վերև ասված էր, վոր 1932—33 թվին ստացված բենզինի 46% և կերոսինի 32% ընկնում է կրեկինգ-պրոցեսի վրա, իսկ Միացյալ-Նահանգներում կրեկինգով ստացված կերոսինի և բենզինի տոկոսը—32-33 է: Ուրեմն, մեր նավթագտման արդյունաբերության հիմքը պետք է կազմեն կրեկինգը: Կրեկինգ գործարանները թիվը պետք է հասնի 90 (հաշվի չառնելով արդեն պատվիրածները): Ներկայումս մենք ունենք ամբողջ Միության մեջ միայն 3 գործարան: 1928—29 թվին նրանք զտել են 54 Կ. տ. բենզին. այդ գումարը ապացուցում է վորքան հետ է մնացել մեր կրեկինգի շինարարությունը: Միացյալ Նահանգներում հարյուրավոր կրեկինգներ են աշխատում. 1928 թ. ստացված է 18 միլ. տ. կրեկինգ-բենզին: Կրեկինգը փոխել է ամերիկական նավթային գործի դեմքը: Մեզ մոտ կրեկինգը կունենա ավելի մեծ դեր, վորովհետև մենք տրակտորների պետք է տանք կրեկինգ-

կերոսին, իսկ ուղիղ գտումից ստացված կերոսինը կծախավի լուսավորության կարիքը բավարարելու:


Մեր մեքենայաշինարարական գործարանները պատրաստվում են արտադրել կրեկինգ-ապարատներ: Այդ կազատի մեզ արտասահմանից բերել տալու կարևորությունից և զբանով մենք կլնայենք վալյուտայի խոշոր գումարներ և կզարգացնենք մեր մեքենաների շինարարությունը:

Աչքը ընկնող տեղ է բռնում ուղղակի գտելու սիստեմը: Հին կուբային բատարեյաները հարկավոր է փոխարինել ամերիկական տրուբչատկաներով: Խոշոր պրոբլեմներ է առաջադրվում 5-ամյա ծրագրով յուղերի արտադրության վերաբերմամբ:

Դեռևս մեր գործարանները աշխատում են հին Նոբելի տիպի յուղային բատարեյաների սիստեմով, վորի հետևանքով մեր արտադրված յուղերի տեսակը չէ տարբերվում նախապատերազմյան արտադրած յուղերից: Ժամանակից շուկան պահանջում է գլխավորապես ավտոմոբիլի յուղեր (ավտոլ) և ինդուստրիայում գործածվող յուղերը ընդունում են յերկրորդական տեղ. մեր գործարաններում արտադրվում է միայն 10% ավտոմոբիլի յուղ և 80—90% ինդուստրիական. իսկ Ամերիկա—ընդհակառակը: Պարզ է, վոր մեր գործարանների աշխատանքի մեթոդները պետք է փոխվեն հիմնովին կերպով: Մենք պետք է փոխենք թե քանակը և թե վորակը: Անհրաժեշտ է շտապ կերպով սկսել յուղի խողովակաձև բատարեյաների շինարարությունը, տեխնիկայի վերջին նվաճումների համապատասխան: Բրայտոնների արտադրությունը կարևոր է անհրաժեշտ գործերից է, վորովհետև ավտոմոբիլային յուղերը ստացվում են այդ ինստալիացիայի միջոցով. մեր Սուբախանու նավթը ամենահամապատասխան հում նյութն է բրայ-ստոկի համար:

Չպետք է մոռանալ ասֆալտի, պարաֆինի, մրի արտադրության մասին: Պարաֆինի գործը լենթադրվում է կենտրոնացնել Գրոդնոում, ասֆալտինը—Բագու: Ամերիկայում տարվա ընթացքում ասֆալտի արտադրությունը հասնում է 3 միլ. տ., իսկ մեզ մոտ—մի քանի տասնյակ հազարների. յերկիրը ավտոմոբիլիզացիայի յենթարկելու ինդիքը ասֆալտի նշանակությունը գորացնում է:

Ամերիկայում շատ է ընդունված բնական գազից մուր արտադրելը. տարվա ընթացքում ստացված գազի 10—15% ծախսւրում է մրի արտադրության: 5-ամյա ծրագրով մեզ մոտ էլ պետք է շինվեն մրի գործարաններ:



Մեր նավթագնական ձեռքերը հիմնովին պեժեք և փոխվի յեվ այդ հնարավոր և խոստ շինարարության գործունեությունը ամենից առաջ. 5-ամյա ծրագրով Միության մեջ պետք և կահավորվեն 30 խողովակաձև բատարեյաններ, վորոնցից յուրաքանչյուրը որվա ընթացքում կարտադրե 2.000 տ.: Կրեկինգի արտադրությունը կպահանջե 90 ինստալյաացիա—ամեն մեկը 475 տ. որակաճ արտադրությամբ: Բրաչ ստոկ սասածը պահանջում և 5 կահավորում—135 տ. որեկան արտադրությամբ:

Հնացած բատարեյանները փոխարինելու համար անհրաժեշտ և 15 յուրային խողովակաձև բատարեյաններ սարքավորել, վորոնց որեկան արտադրականությունը պետք և լինի 700 տ.: Մնացորդները գտումը կոկս ունենալու համար՝ հարկավոր և 350 կուր: Հիմնովին սարքավորումները համար հարկավոր և 500 միլ. ո. (կլորացրած գումար): Կարճ ժամանակամիջոցը պահանջում և չափազանց շտապ շինարարական թափեր:

Բաթումում և Տուրապետում գտելու չափերը համապատասխանում են եկսպորտին. Բաթումի գործարաններում գտումը վորոշված 5.500 հ. տ. 1932—33 թվին, այդ առթիվ 10" նավթագիծը Բագու—Բաթում տանող, պետք և մղել 2 միլ. տ.: Բացի այդ կառուցվում և նոր նավթագիծը 12"—2,5 միլ. տ. մողղ, իսկ գործող 8" կերոսինի գիծը պետք և անցնի նավթ մղելու: Տուրապետում գտվում և 1.560 հ. տ. նավթ և 850 հ. տ. գետտիլատ. ընդհանուր ուժը Տուրապետի գործարանների հասնում և 2.500 հ. տ. և այդ գումարը պետք և հասցնվի Գրոզնի—Տուրապետ նավթագծի կարողությունը: 5 տարվա ընթացքում պետք և կառուցվի Մոսկվայում նավթագետելու գործարան 1.650 հ. տ., վորը հետագայում պետք և արտադրե մինչև 2.500 հ. տ. Կասպի—Մոսկվա նավթագիծը:

Եմբայի զարգացրած արտահանած նավթը պետք և գտվի Վոլգայի վրա, Սարատովի կամ Սամարայի նոր գործարաններում, Ուրալի նավթը չենթադրվում և մշակել Պերմում, իսկ Սախալինինը—Վլադիվոստոկ: Այդ կետերում պետք և կառուցվեն համապատասխան նավթագետիչ գործարաններ: Գլխավոր հին շքը ջանները—Բագվա—Գրոզնու գործարանային հզորությունը համապատասխան կերպով բարձրացնվում և մինչև 10 միլ. տ.: Նոր գործարանային շինարարությունը փոխում և իր դեմքը—արտադրությունը մոտեցնում և սպառմունքին: Փոխանակ պատրաստ մթերքը տեղափոխել յերկաթուղով կամ ջրի ճանապարհով և թանգացնել նրա արժեքը, հում մթերքը տեղափոխվում և նավթագծերով նոր կառուցված գործարանները և այնտեղ գտվում:

Աշխատանքի այդ ձևը Ամերիկայում շատ ընդունված և նավթագծերի ցանցի յերկարությունը հասնում և մինչև 150 հ. կլում. մեզ մոտ էլ այդ բանը պետք և իրագործել:

Ինչ վերաբերում և արտաքին և ներքին շուկաների սպառման փոխհարաբերություններին, պետք և նկատել, վոր 1932—33 թվին եկսպորտի նշանակությունը կլինի մինչև 23%, իսկ 1928—29 թվին նա կազմում էր 32%. այդ բացատրվում և ներքին շուկայի պահանջի հզոր զարգացումով, վորը միաժամանակ ապացուցում և յերկրի ինդուստրիալիզացիայի աճման աստիճանը:

Այդպես են ընդհանուր գծերով 5-ամյա ծրագրով նավթային արդյունաբերության մեջ նախատեսված փոփոխությունները:

Պարզ և, վոր մեր նավթարդյունաբերությունը պետք և հիմնովին փոխե իր գիծը—գործելակերպը. այն խոշոր պահանջները, վորը դրվում և նավթարդյունաբերության առաջ խիստ կարճ ժամանակամիջոցով, և այն պատասխանատու դերը, որ ունի նավթը մեր հսկա շինարարության վերակազմումը, ստիպում են նավթարդյունաբերության վոչ միայն ըմբռնել և որինակել ամերիկական թափերին, այլ նաև արձարծել մեծամասնականներին հատուկ կարողությունը և եներգիայով: Բայց և այնպես չընայած, բոլոր ղեկավարություններին և խոչնդոտներին, վորոնք քիչ չեն, 5-ամյա ծրագիրը պետք և անպայման իրագործվի:

ԱՊՐԲԵՋԱՆԻ ՆԱՎԹԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒ- ԹՅՈՒՆԸ

I. ԱՃՄԱՆ ԹԱՓԵՐՆ ԱՆՑՅԱԼՈՒՄ

5-ամյակի առաջին տարին, վորի ընթացքում սկսվում էին խոշոր աշխատանքներ, վերջացավ միանգամայն բավարար հետևանքներով ինչպես արտադրական կողմից, այնպես էլ տնտեսական տեսակետից: Ծրագրով նախատեսնված թափերը իրագործված են վորոշ ավելացումներով: Բայց 1928—29 թ. կեսից պարզվեց, վոր նախատեսնված նավթային արդյունաբե-
թյան արտադրական չափը անբավարար է, վորովհետև ընդհա-
նուր տնտեսության աճման զարգացումը ավելի ուժեղ էր, քան 5-ամյակով էր յենթադրվում: Այդ պատճառով էլ նավթարդյու-
բերության ծրագրից պահանջվեց լրացուցիչ նավթի արտահա-
նություն:

Ազնեվթի աշխատանքների ընդհանուր պայմանները 1928—29 թ. բավականին ծանր էյին, վորովհետև կրճատած էր խոշոր ծախսերի նախագիծը: Նյութեղենի և կահավորումների քանակը անբավարար էյին: Բացի այդ մի քանի թերություններ տեղի ունեցան աշխատանքի ասպարիզում, վորոնք կապված էյին դիստիպլինայի թուլանալու հետ:

1. ՆԱՎԹԻ ԱՐՏԱՀԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Նավթի արտահանությունը հիմնովին ծրագրով նախատես-
ված էր արտահանել 8.522,129 տ. նավթ: Լրացուցիչ ծրագրով անհրաժեշտ էր 327.600 տ. ևս արտահանել: 1928—29 թվի ըն-
թացքում արտահանված է փաստորեն 8.683.378 տ.: Այդպիսով հիմնական ծրագիրը իրագործված է ավել 1,9%, իսկ ընդարձակ-
ված ծրագիրը չէ լրացրված 1,9%:

Մասամբ այդ չկատարելը բացատրվում է նրանով, վոր ծրագիրը լրացրած է տարվա կեսից և շատ բնական է, վոր այդ կարճ ժամանակամիջոցին բարձրացնել նավթի արտահանումը անկարելի էր: Լայնաչանելով ծրագիրը, կենտրոնը բոլորովին չավելացրեց նոր ծախսերի համար հատկացրած գումարները:

Արտահանած նավթի ծրագրի կատարումը առանձին նավթահանքերի խմբերի տեսակետով այսպիսին է.

| Նավթահանքերի խմբեր | Ծրագրով | Արտահանած | Պրոցիտ % |
|------------------------------|-----------|-----------|----------|
| Լենինային | 2.852.094 | 3.112.148 | 103,1 |
| Այդ թվում. Բալխանի | 922.523 | 1.325.679 | 143,7 |
| Սարունչի | 1.026.538 | 893.043 | 87,0 |
| Ռամանի | 903.033 | 893.426 | 98,9 |
| Սուրախանի | 3.609.980 | 3.340.534 | 92,5 |
| Բիրի-Հեյրաթ | 1.634.125 | 1.858.277 | 113,9 |
| Բինաղաղի | 425.930 | 372.419 | 87,4 |
| Ընդամենը | 8.522.129 | 8.683.378 | 101,9 |

Ծրագիրը իրագործված է լիովին միայն Բիրի-Հեյրաթի և Բալխանու շրջաններում. վերջին շրջանում իրագործման նըպաստեցին հաճախ շատրվանոց կիրմակու շերտի վրա գտնվող նավթահորերը: Ծրագրից նշմարելի հետ մնալը նկատվում է Սարունչու և Բինաղաղու շրջաններում (13%), նույնպես չի իրագործված Սուրախանում ծրագիրը (7,5%), վորովհետև այդ վերջինում նախատեսված նոր նավթահորերի արտադրությունը ծրագրից ցածր էր:

Բազվա շրջանի նավթի արտահանությունը այս տեսակ էր.

| Տարիներ | Հազար տոն | Ավելացումը ասրվա ընթացքում | 1920—21 թ. 100% |
|-------------------|-----------|----------------------------|-----------------|
| 1920—21 | 2.457 | — | 100 |
| 1921—22 | 2.945 | + 19,9% | 119,9 |
| 1922—23 | 3.485 | + 18,3% | 141,8 |
| 1923—24 | 4.125 | + 18,4% | 167,9 |
| 1924—25 | 4.663 | + 13,0% | 189,8 |
| 1925—26 | 5.513 | + 18,2% | 224,4 |
| 1926—27 | 6.810 | + 23,5% | 277,2 |
| 1927—28 | 7.574 | + 11,2% | 308,3 |
| 1928—29 | 8.683 | + 14,7% | 354,4 |

Այս թվերից լերևում է, վոր նացիոնալիզացիայից հետո նավթի արտահանությունը ավելացել է 3,5 անգամ.—2.457 հ. տոնն 1920—21 թ. մինչև 8.683 հ. տ. 1928—29 թ. և 18% ավելի քան մինչ պատերազմային շրջանը: Նավթի արտահանության աճման թափը ստատանվում է 11,2% մինչև 23,5%, միջին տարեկան աճումը կազմում է 17%: Այս տեսակի աճման թափը անցնում է ծանր ինդուստրիայի մյուս ճյուղերի աճման թափերից:

Համեմատենք մանրամասնորեն նավթի արտահանության ընդհանուր գումարները 1928—29 թվի և նախընթաց 1927—28 թվի, բաժանելով արտահանած նավթը շահագործման ձևերի:

| Շահագործման ձևը | Հ ա զ ա ր տ ո ն ն | | |
|----------------------------|-------------------|------------|------------|
| | 1927—28 թ. | 1928—29 թ. | + կամ -- % |
| Խորաքաշ նասոսներ | 2795,5 | 3136,4 | +12,2% |
| Կոմպրեսորներ | 2114,1 | 2499,5 | +18,2% |
| Փերոնիկաներ | 597,9 | 415,7 | -30,5% |
| Շանոտվաներ | 1973,4 | 2516,8 | +27,5% |
| Հավաքած և այլ | 92,9 | 115,0 | +23,8% |
| Ընդամենը | 7573,8 | 8683,4 | +14,7% |

1928—29 թ. արտահանած է նավթ ավելի, քան 1927—28 թ. 1.1108,6 հ. տ. (14%). հետևաբար նավթի աճման թափը ավելի բարձր է քան ծրագրով էր նախատեսված (12,5%): Այս տարվա նավթի ավելացման նպաստեցին ուժեղ կերպով շատրվանները, վորոնց արտադրանքը ավելացել է 543,3 հ. տ. (27,5%), իսկ չեթե ընդհանուր նավթի գումարի հետ համեմատենք շատրվաններից ստացած նավթը—կազմում է 30%, 1927—28 թ. 26,3% դեմ: Աչքի ընկնող խորաքաշ նասոսներով ստացած նավթի աճումը շատ չնչին է. ստացած ամբողջ նավթի հետ համեմատած կազմում է միայն 1% (50,8%, 51,8%).

| | Մեքենաներով ստացած նավթի %/0 ընդհանուր քանակի վերաբերմամբ | |
|----------------------------|---|------------|
| | 1927—28 թ. | 1928—29 թ. |
| Խորաքաշ նասոսներ | 50,8 | 51,8 |
| Կոմպրեսորներ | 38,4 | 41,3 |
| Ժելոնկա | 10,8 | 6,9 |
| Ընդամենը | 100 | 100 |

Աճել է կոմպրեսորներով ստացած նավթի գումարը— 38,4% մինչև 41,3%, ժելոնկայի դերը իջել է 10,8% մինչև 6,9%: Թե վոր շրջանների հաշիվն է ավելանում նավթի արտադրությունը, յերևում է հետևյալ աղյուսյակից (հ. տ.).

| Շ Ր Ջ ա ն ն Ե Ր | 1927—28 | 1928—29 | + կամ - % |
|------------------------------------|---------|---------|--------------|
| | թ. | թ. | |
| Բալխանի | 919,5 | 1266,8 | + 37,8 |
| Խորդանի | 37,8 | 58,9 | + 55,8 |
| Սարունչի (հին շրջան) | 685,9 | 666,0 | - 2,9 |
| Կիրովի անվան նավթահ. | 243,8 | 227,0 | - 6,8 |
| Ռամանի | 929,2 | 893,4 | - 3,9 |
| Սուրխանի | 2702,7 | 3318,7 | + 22,8 |
| Կարա-Չուխուր | 34,3 | 21,8 | - 36,4 |
| Բիբի-Հեյրաթի (հին շրջան) | 635,9 | 700,9 | + 10,2 |
| Բուխտա | 815,8 | 983,5 | + 20,6 |
| Արտեմի անվան կղզի | 131,1 | 127,3 | - 2,9 |
| Պուտա | 60,1 | 46,6 | - 22,5 |
| Բինագաղի | 334,9 | 333,0 | - 0,6 |
| Շուբանի | 42,9 | 39,4 | - 8,2 |
| Ընդամենը | 7573,9 | 8683,3 | + 14,7 |

Նին շրջաններից նավթի արտադրությունը բարձրացրել է հետևյալներում: Բալխանին—37,8% շնորհիվ հաջող Կիրմակու շերտի շահագործման, Սուրխանին—22,8%. այդ շրջանի սահմանների լայնացնելը և V—VI շերտերի շահագործումը մեծ դեր

խաղացին շրջանի արտադրանքը բարձրացնելում և վերջապես Բիբի-Հեյրաթը—10,2%, նույնպես շնորհիվ նոր և ավելի խոր շերտերին: Արտադրությունը իջեցրել են—Սարունչին և Ռամանին 2,9% և 3,9% (այդ շրջաններում արտադրանքը իջնում է յերկրորդ տարին), Շուբանին—8,2% (այստեղ արտադրանքի իջեցումը սկսվել է 1925—26 թվից), Բինագաղու և Արտեմի անվան կղզու նավթի քանակը անփոփոխ է մնացել: Նացիոնալիզացիայից հետո շահագործվող նոր շրջաններից արտադրական նշանակություն ստացել են միայն Կիրովի անվան նավթահանքը և Իլիչի անվան բուխտը. առաջինը, ըստ յերևույթին, հասել է իր արտադրական սահմանին, վորովհետև վերջին տարիներում նկատվում է արտադրական վորոշ իջեցում: Բուխտում նավթի արտահանությունը շարունակվում է բարձրանալ տարեց տարի և յերևի կավելանա հետագայում, վորովհետև այնտեղ դեռ վերին շերտն են շահագործում: Մնացյալ նոր յերկու շրջանները (Խորդանին, Կարա-Չուխուրը, Պուտան) միայն հետախուզական նշանակություն ունին: Այդ շրջանների հետահակարների մասին դատել վճռականապես չե կարելի: Նոր ծննդավայրի դերը Բագվա շրջանի ընդհանուր նավթի արտահանությունից մեջ, վերջին յերեք տարին անփոփոխ է, և հավասար է 15,4%—15,7%. այսպիսով պարզ է ինչ մեծ նշանակություն ունեն հետախուզումները 5-ամյա ծրագրով նախատեսված նավթի արտահանությունը ապահովեցնելու տեսակետով:

Այնուամենայնիվ հարկավոր է ասել, վոր ներկայումս նավթի 83% արտահանվում է նոր, Խորհրդային իշխանությունից ժամանակ դրված բուրգերից, վորոնք փորված են, թե հին և թե նոր շրջաններում. նացիոնալիզացիայից հետո. միայն նավթի

17% ստացվում է կամ նացիոնալիզացիայից հետո վերանորոգված բուրգերից, կամ այն հին հորերից, վորոնք շահագործվում էին այդ մոմենտին:

2. ԳԱԶԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

1928—129 թվում ստացված է 165,7 հազար տոնն գազ, անցյալ 1927—28 թ. հետո համեմատած գազի արտադրությունը բարձրացել է 3,6%, իսկ 1913 թ. հետո համեմատած—6 անգամ ավելի է ստացվում:

3. ՎԱՌԵԼԻՔԻ ԾԱԽՍԵՐԸ

Նավթահանքերի արտադրական պահանջների վրա ծախսված է 1928—29 թ. նավթ—16,337,2 տ., գազ, 17,029,6 տ. և

ելեքտրական ուժ—241.550.952 կ. ժ., վերը նալթի եկվիվալենտով հավասար է 163.782 տոնի: Այդպիսով ընդհանուր վառելիքի ծախսը հավասար է—197,148,8 տ. նալթի: Ամբողջ նալթի է գազի վերաբերյալ կազմում է 2,2%, իսկ 1927 — 28 թ. 3,7%:

4. ՀՈՐԵՐ ՓՈՐԵԼՈՒ ՀԱՐՅԸ

5-ամյա ծրագրով 1928—29 թ. յենթադրվում էր փոքել.— շահագործելու նպատակով—257,785 մետր, հետախուզական դիտավորությամբ նոր շրջաններում—36.685 մետր, իսկ հին շրջաններում—36.819 մետր, ընդհամենը—311.289 մետր: Տարվա ընթացքում փոքելու պրոցեսի հետևանքները այսին.

| Փոքելու նպատակը | Փրակով | Իրագործված | Փրակի % |
|------------------------|---------|------------|---------|
| Շահագործական | 257.785 | 253.873 | 98,5 |
| Հետախուզական հին շրջան | 36.819 | 50.225 | 136.4 |
| „ նոր „ | 16.685 | 16.662 | 99,9 |
| Ընդամենը | 311.289 | 320.760 | 103,0 |

Շահագործական նպատակով փոքելու պատկերն իրագործված է ծրագրից շատ քիչ պակաս (1,5%), հետախուզական նպատակով փոքելու ծրագրերը հին շրջաններում (ավելի խոր շերտերի հետախուզումը) իրագործված է ծրագրից 36,4% ավել, իսկ նոր շրջաններում հետախուզումը իրագործված է 99,9%, փոքված է 16,662 մետր, իսկ ծրագրով նախատեսված էր—16.685 մետր:

Չնայած հետախուզական նպատակով փոքված ծրագրի իրագործումը, անհրաժեշտ է շեշտել այն, վոր ինքը ծրագրերը անբավարար էր, հաշվի առնելով նոր շրջանների 5-ամյա ծրագրով նախատեսված խոշոր դերը նալթի արտահանության մեջ: Նոր հետախուզումների աճման թույլ թափը բացատրվում է մթերքների անբավարար լինելուց (կահավորումների, ստանդաների, փայտե մթերքների, տրանսպորտի և այլը), կազմակերպչական զժվարություններով, վորոնք կախված էյին հետախուզումների ցրված լինելու հետ: Ամբողջ Ապշերոնյան թերակղզու վրա, մինչև անգամ նրանից դուրս, աշխատանքի այս կողմի

վրա, թարմ նալթային հողեր զանելու, պետք է կրկնապատիկ ուշադրություն դարձնել և բոլոր հետախուզումների աշխատանքները խանգարող արգելքները պետք է վերացնել: Չպետք է մոռանալ վոր 5-ամյակը կազմված է նոր, և դեռ չբացված ծննդավայրերից բավականաչափ ստացել է նալթի վրա, իսկ ներկայումս, յերը արդեն 5-ամյակի 2-րդ տարին անցնում է, եյական հետևանքները դեռ շատ աննշան են թեկուզ հետախուզումները ընթանում են միաժամանակ 24 միջավայրում: Անբավարար դրամի հայթայթելու շնորհիվ, փոքելու աշխատանքները կատարվում են մաշված կահավորումով (ստանդաներով և մանավանդ հին խողովակներով), վորի պատճառով առաջանում են ավելորդ ընդհատումներ և ավարչաներ:

Հորեր փոքելու զարգացման աստիճանը նացիոնալիզացիայից հետո այս տեսակ է:

| | |
|-------------------|------------|
| 1920—21 | 3.431 մետր |
| 1921—22 | 15.082 » |
| 1922—23 | 50.484 » |
| 1923—24 | 78.088 » |
| 1924—25 | 122.023 » |
| 1925—26 | 202.985 » |
| 1926—27 | 255.255 » |
| 1927—28 | 262.130 » |
| 1928—29 | 320.760 » |

Նացիոնալիզացիայի մոմենտին փոքելու աշխատանքներին վերջ էր տրված, միայն յերրորդ ոպերացիոն տարվանից արագ զարգանալով, 1925—26 թ. անցան մինչև պատերազմային մակերևութին: 1928—29 թ. փորած է 320.760 մետր, նախընթաց տարուց 22,3% ավել. հետևաբար 5-ամյակում ծրագրված աճման թափը 18,7% կանցնի 3,6%: Հորափոքելու չափերը մինչև պատերազմային մակերևութի 86,7% անցնելու դեպքում, յերը նալթի արտահանությունը միայն 18% է համում, ցույց է տալիս, վոր այժմ, նույն չափով նալթ արտահանելու համար անհրաժեշտ է փոքել շատ անգամ այժմյանից: Մինչդեռ 1913 թ. 10.000 տ. նալթ ստանալու համար 232 մետր էր ընկնում, այժմ նույն 10.000 տ. նալթին համապատասխանում է 372 մետր: Այդ յերևույթը բացատրվում է հին շրջանների ուժասպառվելով, վորտեղ նոր նալթհորերը շատ քիչ եֆֆեկտ են տալիս և ավելորդ անգամ շեշտում է նոր հետախուզումները ուժեղացնելու անհրաժեշտությունը: Նոր շրջաններում տարիների ընթացքում փոքելու քանակի տենդենցյան հետևյալն է:

| | Փորելու քանակը նոր շրջաններում | % % դեպի ընդ. գումարը |
|-------------------|-----------------------------------|--------------------------|
| 1925—26 | 1.974 | 1,0 |
| 1926—27 | 10.790 | 4,2 |
| 1927—28 | 7.877 | 3,0 |
| 1928—29 | 16.662 | 5,2 |

Իհարկե, այս տեսակի նոր հետախուզական նպատակով փորելու տեսակազույգը, չե կարող ապահովացնել նոր շրջաններ ժամանակին շահագործութեան մեջ մտցնելուն: 1928—29 թ. հորեր փորելու զանազան ձևերի նախնիաց տարվա հետ համեմատ, կստանանք հետևյալ պատկերը:

| Փորելու ձևեր | 1927—28 | 1928—29 |
|------------------------|----------------|----------------|
| Պտուտածե | 213.264 | 277.931 |
| Տուրբինայի | 6.681 | 10.353 |
| Կանատային | 36.646 | 29.531 |
| Շտանդի սխտեմ | 5.539 | 2.945 |
| Ընդամենը | 262.130 | 320.760 |

Վերջին ժամանակ տուրբինային և պտուտածե մեթոդներով փորելու ձևերը ստացել են գերակշռող նշանակություն, բայց և այնպես հարկավոր և մատնանշել անբավարար տուրբինածե փորելու զարգացումն: Այդ պետք է բացատրել մեր գործարանների բավարար պատրաստ չլինելուց, փորելու համար գործիքներ արտադրելու:

5. ՆԱՎԹԻ ԶՏՈՒՄԸ

Անցած 1928—29 թիվը ուժեղ շինարարություն տարի եր: Առաջին գործարանը, վորը գործի գցվեց դա Կրեկինգ-Վեկկերսն եր: Կրեկինգը այժմ նորմալ կերպով է աշխատում, գտում է որեկան 250 տ. Սուբախանիի պարաֆինոտ մազութ և տալիս է միջին թվով 25% բենզին: Սկզբում տեղի ունեցան ընդհատումներ և մի շարք փոփոխություններ գործարանի աշխատանքի մեջ: Այդ փոփոխությունների ժամանակ Բագվա ինժեներների ցուցմունքները մեծ դեր կատարեցին: Ապա գործի են գցվում չերկու բատարեյաներ, ամեն մեկը 9 կուրից բաղկացած: Ամեն

մի բատարեյան գտում է 325 տ. (մեկը «Հոկտ. հեղափ.» անվան գործ). մյուսը «Պյատակովի» անվան № 3 գործարանում). հարկավոր է ասել, վոր այդ կուրերը պատվիրած էլին հին գործարանների վերանորոգման համար, բայց միայն կուրերը ստանալուց հետո, Ազնեվթը ավելի նպատակահարմար համարեց ստեղծել միանգամայն նոր արտադրական անհատներ: Թեև կուրային բատարեյան նավթագտման հին տեսակն է, բայց Ազնեվթի 2 բատարեյաներն ունեն վերջին կատարելագործված կահավորումները (կոլոննաներ, եվապառատորներ) և աշխատանքի մեջ բավականին խնայող թյուն են տալիս: Ամենավերջին ժամանակը գործի գցվեցին 3 նոր գործարաններ խողովակային սխտեմի Պինչի և Վիլկեչի սխտեմի—190 հազար տ. արտադրութեամբ և Գրեերի սխտեմի—410 հազար տ.: Խողովակածե գործարանների տարբեր սխտեմները ունենալով իրենց բացասական կողմերը աշխատանքի ժամանակ ցույց կտան մեկի կամ մյուսի առավելությունը, թույլ տալով համապատասխան յեզրակացություններ անել հետագա գործարանային շինարարություն վերաբերմամբ: Արդեն հիմա կարելի է ասել, վոր ամենալավ սխտեմը Գրեվերինն է (ամերիկական): Վերջապես, գործի է գցված թըթվատի գործարանը Լուրգի սխտեմի, վորի արտահանությունը տարվա ընթացքում հավասար է 8.000 տ.: Այդ գործարանի շինարարությունը սկսված է Ազնեվթի, «Կիսլոտի պրոբլեմայի» վորոշումը: Հայտնի է վոր միշտ Ազնեվթի համար ծծմբաթթուն ղեֆիցիտ է յեղել և առանձնապես այդ խնդիրը սուր կերպարանք է ստացել Բաթումի գործարանները գործի գցելուց հետո: Այդ առթիվ սկսված է նոր ծծմբաթթվի գործարանի կառուցումը: Վերջիշած գործարանների շահագործումը զգալի կերպով բարձրացրին Բագվա գործարանների արտադրական ընդունակությունը և զրա շնորհիվ հաջողվեց իրագործել այն անադին ծրագիրը, վորը զրված էր գործարանների առաջ:

1928—29 թ. ծրագրով հաստատված են Բագվա գործարաններում գտել 5.815 հ. տ., նավթ, բենզին ստանալ—409,5 տ. ընդամենը 6.224,5 տ.: Ամբողջ տարվա ընթացքում գտված էր 5.754,5 հ. տ. և ստացված 651,3 հ. տ. բենզին, վորը կազմում է ծրագրի 102,9%:

Գործարանների աշխատանքների հետևանքները այս տեսակի եր:

| | 1927—28 թ. | 1928—29 թ. |
|-----------------------------------|------------------|------------------|
| Զաված և նավթ | | |
| Յուղեր | 1.722.657 | 1.624.197 |
| Թեթև | 3.075.487 | 3.948.328 |
| Ծանր | 22.230 | 2.774 |
| Բինադադու | 51.337 | 179.196 |
| Բենզինից մաքրած | 406.675 | 651.324 |
| Ընդամենը | 5.278.386 | 6.405.819 |
| Ասօցված և պատրաստի սերբներ | | |
| Բենզին | 283.180 | 355.311 |
| Լիգրոին | 30.291 | 84.600 |
| Կերոսին | 1.316.701 | 1.548.986 |
| Գազոյլ | 193.311 | 287.808 |
| Սոլյար յուղ | 65.303 | 75.410 |
| Յուղեր | 265.079 | 282.771 |
| Հատուկ յուղեր | 16.403 | 27.327 |
| Սև մթերքներ | 58.207 | 98.982 |
| Վառելու մթերքներ | 2.870.909 | 3.430.499 |
| Ասֆալտ և բրեկետ | 7.736 | 18.215 |

Չտած նավթից և բենզինից մաքրած նավթի քանակը ավելացել է 1927—28 թ. համեմատած (21,4%)։ պետք է ասել, վոր զգալի կերպով շատացել և ծանր նավթի գտումը, վորը ցույց է տալիս գտելու պրոցեսի մեջ տեղի ունեցող առաջադիմությունը. պատրաստ մթերքների արտադրությունը անցել և հիմնովին ծրագրից և անհամեմատ ավելի է 1927—28 թ. արտադրությունից։ Առանձնապես հարկավոր է մատնանշել ավելացած բենզինի գտումը 1927—28 թ.—25,5%, լիգրոինի—179,3%, կերոսինի—17,6%, յուղերի 6,7%, հատուկ յուղերի—66,6%, գազոյլի—48,9%։ 1928—29 թ. Բաթումում վերջացրած էր առաջին կերոսինի գործարանի կառուցումը և գործի էր գցված, վորի արդյունաբերական ընդունակությունը հավասար է 819 հ. տ. տարվա ընթացքում 327—600 տ.։ Բայց վորովհետև գործարանը նշանակված ժամանակից ուշ գործի գցվեց (արտասահմանից կահավորումի անժամանակ հասցնելու պատճառով) սկզբնական ծրագիրը իջեցրած է մինչև 191.646 տ. (գործարանը գործի գցված 1929 թ. մայիսին)։

Գործարանը գտել է 189.657,3 տ. նավթի և գազոյլի խառնուրդ, վորը կազմում է պակասացրած ծրագրի 99%։

ՉՏԵԼՈՒՑ ՀԵՏՈ ԱՍՍՑՎԱԾ Ե

| | |
|---------------------------|---------------|
| Լիգրոին | 5.655,7 տոնն. |
| Մաքրած կերոսին | 6.389,5 » |
| Հասարակ գազոյլ | 20 351,7 » |
| Մաքրած » | 29.168,7 » |
| Սև սուր յուղեր | 3.167,6 » |
| Եկսպորտի մազութ | 91.795,7 » |
| Ծովի » | 12.634,5 » |

ԿԻՍԼՖԱԲՐԻԿԱՏՆԵՐ

| | |
|---------------------------------|-------------|
| Դիստիլ. բենզ. և կարգի | 235,8 տոնն. |
| » կերոսին | 14.988,4 » |
| Գազոյլ | 1.265,5 » |

